ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ԳՀԾՁԲ-22/22

«17» հունվար 2022 թ.

ք. Երևան

«Կադաստրի կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեսթ Սթֆթ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սկզբնական հաշվառման փաստաթղթերի մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները,

2.4.6 պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 11250000 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամ

դրո

- Գնահատողների, գնահատման կազմակերպությունների և գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների անվանացանկերի ինքնաշխատ վարումը, փոփոխումը և հրապարակումը,
- Լիազոր մարմնի, գնահատողների և գնահատման կազմակերպությունների տնօրենների համար տարբեր պարամետրերով տեղեկատվության որոնման հնարավորությունը և համապատասխան հաշվետվությունների ձևավորումը,
- Անհրաժեշտ է ներդնել հաշվետվությունների գեներատոր նոր հաշվետվությունների ստեղծման համար: Հաշվետվությունների ձևավորման համար նախագծել միջավայր որտեղ հնարավոր կլինի մուտքագրել որոշակի պայմաններ և դրա հիման վրա արտահանել: Պետք է հնարավոր լինի մուտքագրել նաև ցանկեր, որոնք համեմատվեն տվյալների բազայում եղած տվյալների հետ և արտահանվեն պահանջվող տվյալները: Հաշվետվությունների գեներատորը պետք է աշխատի բլոկների սկզբունքով: Ընտրում ենք որոնման դաշտը և սահմանում ենք պայման, այնուհետև՝ ելքային տվյալները: Պետք է հնարավոր լինի նախագծել արտածվող հաշվետվության արտաքին տեսքը: Պետք է հնարավոր լինի պահպանել ձևանմուշները հետագայում օգտագործման, ինչպես նաև փոփոխության համար:
- Լիազոր մարմնի և գնահատման կազմակերպությունների տնօրենների համար հսկողական գործիքակազմի առկայությունը,
- Լիազոր մարմնի, գնահատողների և գնահատման կազմակերպությունների տնօրենների համար էլեկտրոնային ծանուցումների համակարգի առկայությունը:
- Հաշվառման ծրագրում իրավասությունների, գործիքակազմին և հաշվետվություններին հասանելիության տարբերակում ըստ օգտատիրոջ խմբի:

Սույն տեխնիկական առաջադրանքում տեղ գտած պահանջների մանրամասները, ինչպես նաև Ծրագրային ապահովման արտադեմային լուծումները, ներդրվող ստանդարտ հաշվետվությունները, ծանուցումների ձևերը և բովանդակությունը (տեքստերը) անհրաժեշտ է քննարկել և համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո տասնօրյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ փաստաթղթային եղանակով համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված Ծրագրային ապահովման տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները (30 օր):

1.Գնահատողների հաշվառում

Ծրագրային ապահովումը պետք է հնարավորություն ընձեռի բոլոր այն անձանց, որոնք ունեն կամ ունեցել են գնահատողի որակավորման վկայական ընդգրկել գնահատողների տեղեկատվական բազայում: Գնահատման որակավորման վկայական ունեցող և ունեցած բոլոր ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալները մուտքագրվում են Գնանահատողների վերաբերյալ տվյալների բազա համակարգի ադմինիստրատորի կողմից: Տեղեկատվության մի մասը բազայում լրացվում է ինքնաշխատ այլ տվյալների բազաներից: Գնահատողների

վերաբերյալ տվյալների բազայում (Գնահատողների ընդհանուր շտեմարան) պետք է հնարավոր լինի մուտքագրել հետևյալ տեղեկատվությունը՝

- Անուն, Ազգանուն, Հայրանուն,
- Անձնագրային տվյալներ (Անձնագրի սերիա և համար, ՀԾՀ, Նույնականացման քարտի համար, Ում կողմից և երբ է տրմադրվել, սեռը),
- Ծննդյան օր, ամիս, տարի,
- Քաղաքացիություն,
- Հաշվառման հասցե,
- Որակավորման վկայականի համար,
- Որակավորման վկայականի տրամադրման ամսաթիվ,
- Որակավորման վկայականի կարգավիճակ (գործող, դադարեցված),
- Դադարեցման հիմքը,
- Որակավորման վկայականի գործողության ավարտման ամսաթիվ,
- Ինքնակարգավորվող կազմակերպության անվանումը, որին անդամակցում է գնահատողը,
- Հեռախոսահամար,
- Էլեկտրոնային փոստի հասցե,
- Կարգավիճակը՝ Հաշվառված կամ Չհաշվառված,
- Կազմակերպությունը, որի հետ ունի աշխատանքային պայմանագիր,
- Աշխատանքային պայմանագրի տեսակը՝ հիմնական կամ համատեղությամբ,
- Մուտքանունը,
- Մուտքագրված հաշվետվությունների քանակը:

Գնահատողների տվյալների լրացման դաշտերից այն տվյալները որոնք կարելի է լրացնել անձնագրային տվյալների բազայից լրացվում է ինքնաշխատ: Մուտքագրված հաշվետվությունների քանակը լրացվում է Գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագրից՝ ինքնաշխատ, ընդ որում մուտքագրված հաշվետվությունների քանակները բաժանվում են ըստ կազմակերպությունների և մուտքագրած անշարժ գույքերի տեսակների: Ցանկում ներառված ֆիզիկական անձանց տվյալներին առկայության դեպքում պետք է հնարավոր լինի կցել էլեկտրոնային փաստաթղթեր՝ մասնավորապես որակավորման վկայականների, անձը հաստատող փաստաթղթերի, ապահովագրության վկայագրի պատճեններ և գնահատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի վերաբերյալ տեղեկանք:

Գնահատողների ընդհանուր շտեմարանը բաժանվում է հետևյալ շտեմարանների՝

- Գնահատման որակավորման վկայականները դադարած ֆիզիկական անձիք,
- Գնահատման որակավորման գործող վկայական ունեցող ֆիզիկական անձիք,
- Գնահատման որակավորման գործող վկայական ունեցող ՀՀ քաղաքացիներ,
- Ինքնակարգավորվող կազմակերպության անդամ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողներ
- Գնահատման որակավորման գործող վկայական ունեցող օտարերկրյա քաղաքացիներ,
- Հաշվառված գնահատողներ,
- Աշխատանքային պայմանագիր ունեցող հաշվառված գնահատողներ:

Համակարգը գործող որակավորում ունեցող ֆիզիկական անձանց համար տվյալները մուտք անելուց հետո ձևավորում է Գնահատողների գրասենյակ մուտք գործելու համար նախատեսված մուտքանուն և առաջին անգամ համակարգ մուտք լինելու համար գաղտնաբառ: Ձևավորված մուտքանունը և գաղտնաբառը ձևավորվելուց հետո անմիջապես ուղարկվում է էլեկտրոնային փոստին և (կամ) կարճ հաղորդագրությամբ բջջային հեռախոսահամարին: Համակարգի ադմինիստրատորը պետք է հնարավորություն ունենա ընտրել Ծանուցման տեսակը: Առաջին անգամ մուտք լինելուց հետո Համակարգը առաջարկում է փոփոխել գաղտնաբառը: Ձևավորված մուտքանունը ունեցող ֆիզիկական անձը նաև համարվում է www.e-cadastre.am կայքի գրանցված օգտատեր: Եթե այդ անձը արդեն իսկ գրանցված է կայքում որպես օգտատեր, ապա նոր մուտքանուն չի ձևավորվում այլ միայն ծանուցվում է այն մասին որ այսուհետ նա նաև Գնահատողների Գրասենյակի գրանցված օգտատեր է: Ծրագրային ապահովումը պետք է հնարավորություն ընձեռի գրանցված օգտատեր հանդիսացող գնահատողներին Կադաստրի կոմիտեում հաշվառվելու նպատակով ներկայացնել առցանց դիմում և անհրաժեշտ կից փաստաթղթեր: Ծրագրային ապահովումը պետք է հնարավորություն ունենա գնահատողներին ծանուցելու (Ծրագրային ապահովման միջոցով, էլեկտրոնային փոստի միջոցով և կարճ հաղորդագրությամբ) Լիազոր մարմնի կողմից կայացված որոշման վերաբերյալ (ներկայացված փաստաթղթերում թերությունների վերաբերյալ, հաշվառելու, հաշվառումից հանելու կամ հաշվառումը մերժելու վերաբերյալ):

Ծրագրային ապահովում մուտք գործելու մուտքանուն ունեցող գրանցված օգտատերերը (Գնահատողը) պետք է հնարավորություն ունենան խմբագրելու <Հաշվառման հասցե>, <Հեռախոսահամար> և <Էլեկտրոնային փոստի հասցե> դաշտերը, ինչպես նաև տան համաձայնություն այդ տվյալները հրապարակվող անվանացանկերում հրապարակելու կամ չհրապարակելու վերաբերյալ:

Գնահատողների շտեմարանները ինչպես նաև հրապարակվող անվանացնակերը պետք է ունենան տվյալների յուրաքանչյուր դաշտով ցանկերը դասավորելու, ֆիլտրելու և որոնելու գործիքակազմ:

2. Գնահատման կազմակերպությունների հաշվառում

Ծրագրային ապահովումը պետք է հնարավորություն ընձեռի վարել այն բոլոր իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների ցանկը որոնք հաշվառվել են Կադաստրի կոմիտեում, որպես Գնահատման կազմակերպություն: Գնահատման կազմակերպությունների վերաբերյալ տվյալների բազայում (Գնահատման կազմակերպությունների շտեմարան) պետք է հնարավոր լինի մուտքագրել հետևյալ տեղեկատվությունը՝

- Կազմակերպության անվանումը,
- Կազմակերպաիրավական ձևը,
- Պետական գրանցման (հաշվառման) համարը,
- Իրավաբանական հասցեն,
- Գործունեության հասցեն,
- Հեռախոսահամար,
- Էլեկտրոնային փոստի հասցե,
- Ղեկավարի տվյալները
    - ✓ Անուն, Ազգանուն, Հայրանուն,

- ✓ Անձնագրային տվյալներ (Անձնագրի սերիա և համար, ՀԾՀ, Նույնականացման քարտի համար, Ում կողմից և երբ է տրմադրվել, սեռը),
- ✓ Ծննդյան օր, ամիս, տարի,
- ✓ Քաղաքացիություն,
- ✓ Հաշվառման հասցե,
- ✓ Հեռախոսահամար,
- ✓ Էլեկտրոնային փոստի հասցե,

- Գնահատողները:

Գնահատման կազմակերպությունների տվյալների լրացման դաշտերից այն տվյալները որոնք կարելի է լրացնել Կազմակերպությունների պետական ռեգիստրի տվյալների բազայից լրացվում է ինքնաշխատ: Գնահտողների վերաբերյալ տվյալները լրացվում է <Հաշվառված գնահատողներ> տվյալների բազայից կոնկրետ գնահատողին ընտրելու միջոցով: Ցանկում ներառված կազմակերպությունների գնահատողներին պետք է հնարավոր լինի Գնահատման կազմակերպությունների շտեմարանում կցել էլեկտրոնային փաստաթղթեր, մասնավորապես ապահովագրության վկայագրի պատճենը և գնահատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի վերաբերյալ տեղեկանքը:

Համակարգը հաշվառված Գնահատման կազմակերպության տնօրենների տվյալները մուտք անելուց հետո ձևավորում է Գնահատողների գրասենյակ մուտք գործելու համար նախատեսված մուտքանուն և առաջին անգամ համակարգ մուտք լինելու համար գաղտնաբառ: Ձևավորված մուտքանունը և գաղտնաբառը ձևավորվելուց հետո անմիջապես ուղարկվում է տնօրենի էլեկտրոնային փոստին և (կամ) կարճ հաղորդագրությամբ բջջային հեռախոսահամարին: Համակարգի ադմինիստրատորը պետք է հնարավորություն ունենա ընտրել Ծանուցման տեսակը: Առաջին անգամ մուտք լինելուց հետո Համակարգը առաջարկում է փոփոխել գաղտնաբառը: Ձևավորված մուտքանուն ունեցող տնօրենը նաև համարվում է www.e-cadastre.am կայքի գրանցված օգտատեր: Եթե այդ անձը արդեն իսկ գրանցված է կայքում որպես օգտատեր, ապա նոր մուտքանուն չի ձևավորվում այլ միայն ծանուցվում է այն մասին, որ այսուհետ նա նաև Գնահատողների Գրասենյակի գրանցված օգտատեր է: Ծրագրային ապահովումը պետք է հնարավորություն ունենա կազմակերպության տնօրեններին ծանուցելու (Ծրագրային ապահովման միջոցով, էլեկտրոնային փոստի միջոցով և կարճ հաղորդագրությամբ) Լիազոր մարմնի կողմից կայացված որոշումներին կապված գնահատման կազմակերպության և այդ կազմակերպությունան հետ աշխատանքային պայմանագիր ունեցող գնահատողների հետ: Ծրագրային ապահովումը ծանուցում է Կազմակերպության ղեկավարին նաև այն ժամանակ, երբ Կազմակերպությունում հաշվառված բոլոր հիմնական աշխատանքային պայմանագիր ունեցող գնահատողները նաև հիմնական աշխատանքային պայմանագիր ունեն այլ գնահատման կազմակերպությունների հետ ևս:

Ծրագրային ապահովում մուտք գործելու մուտքանուն ունեցող գրանցված օգտատերերը (Գնահատման կազմակերպության ղեկավարը) պետք է հնարավորություն ունենան խմբագրելու Կազմակերպության տվյալները բաժնից <Գործունեության հասցեն>, <Հեռախոսահամար>, <Էլեկտրոնային փոստի հասցե>, Ղեկավարի տվյալները բաժնից <Հաշվառման հասցե>, <Հեռախոսահամար> և <Էլեկտրոնային փոստի հասցե> դաշտերը, ինչպես նաև տա համաձայնություն այդ տվյալները հրապարակվող անվանացանկերում հրապարակելու կամ չհրապարակելու վերաբերյալ:

3. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների հաշվառում

Ծրագրային ապահովումը պետք է հնարավորություն ընձեռի վարել այն բոլոր կազմակերպությունների ցանկը որոնք հաշվառվել են Կադաստրի կոմիտեում, որպես գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների վերաբերյալ տվյալների բազայում (Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների շտեմարան) պետք է հնարավոր լինի մուտքագրել հետևյալ տեղեկատվությունը՝

- Կազմակերպության անվանումը,
- Կազմակերպաիրավական ձևը,
- Պետական գրանցման (հաշվառման) համարը,
- Իրավաբանական հասցեն,
- Գործունեության հասցեն,
- Հեռախոսահամար,
- Էլեկտրոնային փոստի հասցե,
- Կազմակերպության ղեկավարի տվյալները
  - ✓ Անուն, Ազգանուն, Հայրանուն,
  - ✓ Անձնագրային տվյալներ (Անձնագրի սերիա և համար, ՀԾՀ, Նույնականացման քարտի համար, Ում կողմից և երբ է տրմադրվել, սեռը),
  - ✓ Ծննդյան օր, ամիս, տարի,
  - ✓ Քաղաքացիություն,
  - ✓ Հաշվառման հասցե,
  - ✓ Հեռախոսահամար,
  - ✓ Էլեկտրոնային փոստի հասցե,
- Անդամների քանակը և ցանկը,
- ՀՀ քաղաքացի հանդիսացող անդամների քանակը, ցանկը և տոկոսը ՀՀ քաղաքացի հանդիսացող գործող գնահատման որակավորում ունեցող ֆիզիկական անձանց մեջ:

Անդամներն ընտրվում են <Գնահատման որակավորման գործող վկայական ունեցող ֆիզիկական անձիք> շտեմարանից, իսկ իսկ ՀՀ քաղաքացի հանդիսացող անդամների ցանկը որոշվում է <Քաղաքացիություն> դաշտի արժեքով: Եթե ՀՀ քաղաքացի հանդիսացող գործող գնահատման որակավորում ունեցող ֆիզիկական անձանց անդամ հանդիսացողների քանակը պակաս է <Գնահատման որակավորման գործող վկայական ունեցող ՀՀ քաղաքացիներ> շտեմարանում ընդգրկված անձանց 30%-ից, ապա դրա վերաբերյալ ծանուցվում է Կազմակերպության ղեկավարը, Ծրագրային ապահովման միջոցով համակարգի ադմինիստրատորին և Կադաստրի կոմիտեի համապատասխան օգտատիրոջը: Լրացուցիչ ծանուցում է ուղարկվում նաև եթե Տասներկու օրացուցային ամիսների ընթացքում ավելի քան վաթսուն օր կազմակերպությանն անդամակցող գնահատողների քանակը պակաս է լիազոր մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողների քանակի երեսուն տոկոսից:

4.Գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիր

Գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիրը նախատեսված է <Գնահատման գործունեություն մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերով նախատեսված անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ տեղեկությունների մուտքագրման, հաշվետվությունը նույնականացնող անհատական համարի ձևավորման, մուտքագրված տվյալների շտեմարանների վարման, որոշակի պայմանների տեղի ունենալու դեպքում այդ հաշվետվությունների վերաբերյալ Կադաստրի կոմիտեին ծանուցման համար:

Գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագրում անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ տեղեկությունների մուտքագրման իրավունք ունեն միայն <Աշխատանքային պայմանագիր ունեցող հաշվառված գնահատողներ> շտեմարանում ընգրկված անձինք: Գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագրում անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ մուտքագրված տեղեկությունների որոնման և դիտման իրավունք ունեն գնահատողները (իրենց մասով), գնահատման կազմակերպությունների ղեկավարները (Կազմակերպության գնահատողների մասով), հաշվետվությունը նույնականացնող անհատական համարը ունեցող անձը (այդ հաշվետվության մասով) և Համակարգի ադմինիստրատորը (մուտքագրված բոլոր հաշվետվությունների մասով):

Գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագրում անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ լրացվող տեղեկություններն են՝

- Գնահատողի Անուն, Ազգանուն,Հայրանունը,
- Գնահատման որակավորման վկայականի Համարը և Ամսաթիվը,
- Գնահատման կազմակերպության անվանումը և Կազմակերպաիրավական ձևը,
- Անշարժ գույքի հասցեն,
- Իրավունքների պետական գրանցման վկայականի համարը,
- Անշարժ գույքի ծածկագիրը,
- Հողամասի նկատմամբ իրավունքի տեսակը,
- Հողամասի նպատակային նշանակությունը,
- Հողամասի գործառնական նշանակությունը,
- Հողամասի մակերեսը,
- Շինությունների նկատմամբ իրավունքի տեսակը,
- Շինությունների նպատակին նշանակությունը,
- Շինությունների գործառնական նշանակությունը,
- Շինությունների ընդհանուր մակերեսը,
- Գնահատման նպատակը (արժեքի տեսակը),
- Գնահատման պարտադիր դեպքը,
- Գնահատված արժեքը,
- Ժամանակահատվածը,
- Գնահատման ամսաթիվը,
- Գնահատման պատվիրատու,
- Շահառու,

- Լրացուցիչ տեղեկատվություն,
- Տվյալների լրացման ամսաթիվը,
- Անհատական համար:

- Գնահատողի Անունը, Ազգանունը, Հայրանունը, Գնահատման որակավորման վկայականի Համարը և Ամսաթիվը լրացվում է ինքնաշխատ և խմբագրման ենթակա չէ,
- Գնահատման կազմակերպության անվանումը և Կազմակերպաիրավական ձևը լրացվում է ինքնաշխատ և խմբագրման ենթակա չէ: Եթե Գնահատողը աշխատանքային պայմանագիր ունի երկու և ավել կազմակերպությունների հետ, ապա Ծրագրային ապահովում մուտք լինելուց առաջ գնահատողը պետք է ընտրի այն կազմակերպությունը, որի համար կատրաված գնահատման հաշվետվության տվյալների մուտքագրման համար է մուտք լինում Ծրագրային ապահովում:
- Անշարժ գույքի հասցեն լրացվում է ինքնաշխատ Հայաստանի Անշարժ Գույքի Տեղեկատվական Համակարգից (ARPIS): Իրավունքների գրանցման վկայականի համարով կամ անշարժ գույքի ծածկագրով անշարժ գույքի որոնման արդյունքում այն ընտրելուց հետո: Եթե որոնման արդյունքում անշարժ գույք չի հայտնաբերվում Անշարժ գույքի հասցե դաշտը ակտիվանում է և հնարավոր է դառնում որոնել անշարժ գույքը հասցեով: Անշարժ գույքի հասցեներ դաշտերը և կառուցվածքը պետք է համապատասխանի ARPIS համակարգի հասցեի դաշտերի և կառուցվածքներին: Աշխարհագրական անվանումները ընտրվում են ARPIS համակարգի տվյալների բազայից:
- Իրավունքների պետական գրանցման վկայականի համարը լրացվում է գնահատողի կողմից, սակայն այն ստուգվում է և լրացվում է միայն ARPIS համակարգում դրա առկայության դեպքում: Եթե հասցեն որոնվել է անշարժ գույքի ծածկագրով կամ Հասցե դաշտերի լրացմամբ ապա վկայականի համարը լրացվում է ինքնաշխատ ARPIS համակարգից:
- Անշարժ գույքի ծածկագիրը լրացվում է ինքնաշխատ ARPIS համակարգից եթե Հասցեն որոնվել է Իրավունքների պետական գրանցման վկայականի համարով կամ Հասցե դաշտերի լրացմամբ: Եթե անշարժ գույքի ծածկագիրը լրացվել է գնահատողի կողմից ապա այն ստուգվում է և լրացվում է միայն ARPIS համակարգում դրա առկայության դեպքում:
- Հողամասի նկատմամբ իրավունքի տեսակը, Հողամասի նպատակային նշանակությունը, Հողամասի գործառնական նշանակությունը, Հողամասի մակերեսը, Շինությունների նկատմամբ իրավունքի տեսակը, Շինությունների նպատակին նշանակությունը, Շինությունների գործառնական նշանակությունը, Շինությունների ընդհանուր մակերեսը լրացվում են ARPIS համակարգից ինքնաշխատ: Ընդ որում լրացվում է հողամասի և շինությունների գումարային մակերեսը, իսկ մյուս տվյալները լրացվում են ամենամեծ մակերես ունեցող հողամասին և շինության տվյալներին համապատասխան:
- Գնահատման նպատակը (արժեքի տեսակը) դաշտը կարող է ստանալ հետևյալ արժեքները՝
  - ✓ Շուկայական արժեք,
  - ✓ Լիկվիդային արժեք,
  - ✓ Շուկայական և լիկվիդային արժեք,

- ✓ Արժեքն օգտագործման մեջ,
- ✓ Վերարտադրման արժեք,
- ✓ Փոխարինման արժեք,
- ✓ Վերարտադրման (կամ փոխարինման) մնացորդային արժեք,
- ✓ Ներդրումային արժեք,
- ✓ Օգտահանության արժեք,
- ✓ Վարձավճարի շուկայական արժեք,
- ✓ Օգտագործման իրավունքի շուկայական արժեք,
- ✓ Կառուցապատման իրավունքի շուկայական արժեք,
- ✓ Ապահովագրական արժեք,
- ✓ Հատուկ արժեք,
- ✓ Այլ արժեք (Ազատ լրացման տեքստային դաշտ):

- Գնահատման պարտադիր դեպքը
  - ✓ Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման համար,
  - ✓ Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման համար,
  - ✓ Անշարժ գույքը պետության կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) համար,
  - ✓ Անշարժ գույքը համայնքի կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) համար,
  - ✓ Պետական անշարժ գույքը վարձակալությամբ հանձնելու համար,
  - ✓ Համայնքային անշարժ գույքը վարձակալությամբ հանձնելու համար,
  - ✓ Պետական կարիքների համար անշարժ գույք վարձակալելու համար.
  - ✓ Համայնքային կարիքների համար անշարժ գույք վարձակալելու համար.
  - ✓ Անշարժ գույքն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու համար.
  - ✓ Անշարժ գույքի բռնագանձման հետևանքով դրա իրացման համար.
  - ✓ Անշարժ գույքը հրապարակային սակարկություններով օտարելու համար.
  - ✓ Օրենքով սահմանված այլ դեպք:
- Գնահատված արժեքը թվային դաշտ է և արտահայտվում է ՀՀ դրամով,
- Ժամանակահատվածը դաշտը լրացվում է միայն եթե <Գնահատման նպատակը (արժեքի տեսակը)> դաշտում լրացված է <Վարձավճարի շուկայական արժեք> արժեքի տեսակը և կարող է ստանալ հետևյալ արժեքները՝ օրեկան, ամսեկան, եռամսյակային, կիսամյակային, տարեկան և այլ ժամանակահատված: Այլ ժամանակահատված ընտրելու դեպքում ակտիվանում է ազատ տեքստային դաշտ:
- Գնահատման ամսաթիվը դաշտը ընտրովի դաշտ է, որտեղ հնարավոր է ընտրել օր, ամիս տարի և այստեղ մուտքագրվում է այն ամսաթիվը, որի դրությամբ գնահատվել է անշարժ գույքը: Տվյալ դաշտում որպես ամսաթիվ մինչև ընտրվելը լրացված է լինում տվյալների լրացման օրվա ամսաթիվը:
- <Գնահատման պատվիրատու> և <Շահառու> դաշտերը ազատ տեքստային դաշտեր են, և անհրաժեշտության դեպքում պետք է հնարավոր լինի լրացնի մի քանի պատվիրատու կամ շահառու,
- <Լրացուցիչ տեղեկատվություն> դաշտը ազատ տեքստային դաշտ է,
- <Տվյալների լրացման ամսաթիվ> և <Անհատական համար> դաշտերը լրացվում են ինքնաշխատ՝ մուտքագրված տվյալները հաստատելուց հետո: <Անհատական համար>

դաշտի արժեքը համակարգի կողմից գեներացվող չկրկնվող համար է կազմված թվերից և լատինատառ տառերից: <Անհատական համար> դաշտի արժեքով պետք է հնարավոր լինի www.e-cadastre.am կայքում որոնել և դիտել անշարժ գույքի հաշվետվության վերաբերյալ լրացված տվյալները:

Անշարժ գույքի հաշվետվության վերաբերյալ տվյալները լրացնելուց և պահպանելուց հետո համակարգի կողմից կազմվում է Լրացված տվյալների վերաբերյալ ամփոփաթերթ, որը կցվում է լրացված տվյալներին և ուղարկվում է գնահատողի և գնահատման կազմակերպության ղեկավարի էլեկտրոնային փոստին: Ամփոփաթերթի ձևը և լրացվող տվյալները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

Անշարժ գույքի լրացված տվյալները՝ ինքաշխատ, յուրաքանչյուր ամիս համեմատվում են ARPIS համակարգում այդ գույքային միավորների հետ 2022 թվականի հունվարի 1-ից հետո տեղի ունեցած գործարքների հետ և առուվաճառքի, գրավադրման, օգտագործման գործարքների առկայության դեպքում ինքնաշխատ լրացվուվում են այդ գործարքների վերաբերյալ տվյալներ: Առուվաճառքի դեպքում պայմանագրային գինը, օգտագործման դեպքում պայմանագրային վարձավճարը և ժամանակահատվածը, իսկ գրավադրման դեպքում գնահատված արժեքը: Մուտքագրված գնահատված արժեքի և համակարգի կողմից ինքնաշխատ լրացված պայմանագրային գնի 30 և ավել տոկոս տարբերության դեպքում Ծրագրային ապահովման միջոցով Պատվիրատու կողմից սահմանած ձևով և տեսքով ծանուցվում է Ծրագրային ապահովման միջոցով (այդ նպատակով ստեղծված ծրագրային պատուհան) համակարգի ադմինիստրատորին և Կադաստրի կոմիտեի համապատասխան օգտատիրոջը: Ծրագրային ապահովման միջոցով Պատվիրատու կողմից սահմանած ձևով և տեսքով ծանուցվում է Ծրագրային ապահովման միջոցով (այդ նպատակով ստեղծված ծրագրային պատուհան) համակարգի ադմինիստրատորին և Կադաստրի կոմիտեի համապատասխան օգտատիրոջը նաև այն դեպքում երբ նույն անշարժ գույքի վերաբերյալ լրացվող տվյալների <Գնահատված արժեքը> դաշտի տվյալը 30 և ավել տոկոս տարբերվում է նախկինում մուտքագրված տվյալ անշարժ գույքի վերաբերյալ լրացված տվյալների <Գնահատված արժեքը> դաշտի արժեքից:

5. Աշխատանքների իրականացումը, ընդունումը և մշակված ծրագրային ապահովման սպասարկումը

5.1. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո տասնօրյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ փաստաթղթային եղանակով համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները:

5.2. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների ադյունքում մշակված ծրագրային ապահովման ընդլայնումները պետք է հանձնվեն Պատվիրատուին ըստ պատրաստվածության աստիճանի՝ նախապես համաձայնեցված ժամկետներում:

5.3. Կատարողը չի կարող որևէ այլ կերպ փոփոխության ենթարկի էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովումը, քան դա անհրաժեշտ է սույն տեխնիկական բնութագրով անհրաժեշտ լրացումների իրականացման համար:

5.4. Կատարողը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից տրամադրված փորձարկման ենթակառուցվածքում Կատարողի կողմից իրականացված յուրաքանչյուր ընդլայնման՝ որպես էլեկտրոնային համակարգի բաղկացուցիչ մասի փորձարկումը:

5.5. Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրոնային ծառայությունների ներդրման հետ կապված ցանցային ծրագրային կարգաբերումները:

5.6. Աշխատանքների վերջում Կատարողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերվող բոլոր տվյալները և ծրագրային փոփոխությունների կոդերը ելակետային նյութերը /source code/:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի հաշվառումից հետո	20 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար _____ Մ. Խաչատրյան

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

տնօրեն _____ Հ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 2021թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

7.01.2022թ.կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-22/22 սկզբնական հաշվառման փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

17 հունվարի 2022թ.

ք. Երևան

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022 թվականի հունվարի 17 -ին սկզբնական հաշվառման փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-22/22 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր 7.5 կետով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 7.5 կետով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար՝ _____ Մ.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Բեսթ Սոֆթ ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

Տնօրեն՝ _____ Հ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված ծածկագիրը՝ ըստ գնումների պլանի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79211130/501	սկզբնական հաշվառման փաստաթղթերի մշակման ծառայություններ	11250000	11250000	11250000	11250000	11250000	11250000	11250000	11250000	11250000	11250000

ԳՆՈՐԴ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար ---------- Մ.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Բեսթ Սոֆթ ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

Տնօրեն՝ ---------- Հ. Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.